Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2025.

«Լեռնավան գյուղում ոռոգման ջրի ջրամբարի և ջրատարների զարգացման» ծրագիր

Երևան՝ 6 Փետրվար, 2026

2026թ.-ի Փետրվարի 6-ին Լոռու մարզի Սպիտակ համայնքում գտնվող YMCA կազմակերպության գրասենյակում տեղի ունեցավ «Լեռնավան գյուղում ոռոգման ջրի ջրամբարի և ջրատարների զարգացման» (մինչև 127,000 ԱՄՆ դոլար) ծրագրի դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական, Լոռու մարզպետ պարոն Արեն Մկրտչյանը, Լոռու մարզպետի տեղակալ պարոն Արսեն Ղարիբյանը, Սպիտակ համայնքի ղեկավար պարոն Քաջայր Նիկողոսյանը, «Սպիտակ ֆերմեր» ՀԿ-ի գործադիր տնօրեն դոկտոր Սարգիս Մարկոսյանը, ինչպես նաև պետական պաշտոնյաներ և Լեռնավան գյուղից ներկայացուցիչներ::

Այս ծրագիրը նպատակ ունի վերականգնել 80 հեկտար չօգտագործվող գյուղատնտեսական հողերի արտադրողականությունը՝ Սպիտակ համայնքի Լեռնավան գյուղում ջրամբարի (8,900 խորանարդ մետր) և ջրատար խողովակների (450 մետր) կառուցման միջոցով: Ծրագրով նաև նախատեսվում է բարելավել մոտ 150 տեղական տնային տնտեսությունների և սոցիալապես խոցելի խմբերի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված 50 անձանց կենսապայմանները: Գյուղի ոռոգման համակարգը լուրջ վնաս է կրել 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից, և չնայած գյուղացիների կողմից մասնակի վերականգնման ջանքերին, ջրի մատակարարումը աղբյուրից դեպի գյուղատնտեսական հողեր մնացել է խնդրահարույց: Այս իրավիճակը հանգեցրել է գյուղատնտեսական ոլորտում զբաղվածության հնարավորությունների նվազմանը և բնակիչների շրջանում տնտեսական խոցելիության բարձրացմանը՝ ստեղծելով աջակցության անհրաժեշտություն:

«Սպիտակ ֆերմեր» ՀԿ-ի գործադիր տնօրեն, դոկտոր Մարկոսյանը արարողության ժամանակ նշեց. «Ճապոնիայի կառավարության աջակցության շնորհիվ Լեռնավան գյուղը կկարողանա զարգացնել ոռոգման համակարգ, որը կապահովի ջրի կայուն հասանելիություն՝ բարելավելով գյուղատնտեսական արտադրողականությունը, որը կարևոր է տեղական արդյունաբերության համար»: Շնորհավորական ուղերձներ հղեց նաև դեսպան ԱՈԿԻ Յուտական՝ նշելով. «Ես ուրախ եմ, որ այս ջրամբարը կապահովի ջրի կայուն հասանելիություն ոռոգման համար և կբարելավի գյուղատնտեսական արտադրողականությունը: Հուսով եմ, որ այս ծրագիրը կամրապնդի գյուղատնտեսական արտադրողականությունը և կնպաստի Լեռնավան գյուղի կայուն ապագային»:

Դրամաշնորհի պայմանագրի ստորագրման արարողություն

(ձախից)
Պարոն Նիկողոսյան (Սպիտակ համայնքի ղեկավար), դեսպան Առկի,
Պարոն Մկրտչյան (Լոռու մարզի մարզպետ),
Պարոն Ղարիբյան (Լոռու մարզի փոխմարզպետ)
և դոկտոր Մարկոսյան («Սպիտակ ֆերմեր» ՀԿ-ի գործադիր տնօրեն)